ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 1. 1959 Общественные науки

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱ, ՆՎԻՐՎԱԾ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆԸ

1958 թ. դեկտեմբերի 22-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ ԳԱ Փիլիսոփայության սեկտորի գիտական սեսիան՝ նվիրված ժամանակակից բուրժուական գաղափարախոսության տարբեր ընդավառների քննադատությանը: Զեկուցումներով հանդես եկան սեկտորի վարիչ Հ. Ասլանյանը, սեկտորի գիտական աշխատողներ՝ Է. Մարդարյանը, Ցա. Խաչիկյանը, Ս. Ղազարյանը և Պետական համալսարանի դասախոս Գ. Բրուայանը: Սեսիայում կարդացված զեկուցումներում քննարկվում էին բուրժուական փիլիսոփայության, սոցիոլոգիայի, գեղագիտության տարբեր հարցեր:

Հ. Ասլանյանը իր «Բուրժուական սոցիոլոգիայի սնանկացումը և պատմական պրոցեսը» թեմայով զեկուցման մեջ, քննադատելով բուրժուական սոցիոլոգիայի ռեակցիոն ներկայացուցիչներին, ցույց տվեց, որ նրանք ժողովրդական մասսաների միտքը թմրեցնելու և կապիտալիստական քայքայվող ու մեռնող կարգերի կյանքը երկարացնելու նպատակով ըստ էության ժխտում են պատմական պրոցեսը:

Հ. Ասլանյանը բուրժուական ռեակցիոն սոցիոլոգիային հակադրեց հասարակության զարգացման մասին մարքս-լենինյան միակ գիտական, ՍՍՌՄ-ում և ժողովրդական դեմոկրատիայի երկրներում սոցիալիզմի կառուցման պրակտիկայով հաստատված ուսմունքը:

Սեսիայում լսվեց Է. Մարդարյանի զեկուցումը, որը նվիրված էր լոկալ կուլտուրաների-քաղաքակրթությունների Շպենդլեր-Թոյնբիի տեսության քննադատությանը: Թոյնբին ժամանակակից բուրժուական սոցիոլոգիայի խոշոր ճանաչված ներկայացուցիչներից մեկն է: Ընկ. Մարդարյանը համոզիչ կերպով ցույց տվեց, որ բուրժուական աշխարհում այդքան մեծարված նրա պատմա-փիլիսոփայական կոնցեպցիան մեր օրերում Շպենդլերի ռեակցիոն ուսմունքի կրկնությունն է: Նա, քննադատական վերլուծության ենթարկելով Շպենդլեր-Թոյնբիի հայացքները միանգամայն, իրավացի կերպով հանդեց այն եզրակացության, որ այդ փիլիսոփաները կապ չեն տեսնում պատմության տարբեր ժամանակաշրջաններում սկզբնավորված ու զարգացած կուլտուրաների միջև, բացառում են պատմական պրոցեսի միասնությունն ու անընդհատությունը:

Սեսիայում «Ժամանակակից բուրժուական արվեստի և գեղագիտության ապահումանիդացումը» թեմայով լսվեց Ցա. Խաչիկյանի զեկուցումը: Բազմաթիվ փաստերով նա ցույց տվեց, որ կապիտալիստական աշխարհի ժամանակակից բուրժուական արվեստը հասարակության ու խաղաղության գործին նպաստելու փոխարեն մարդատյացությունն է բարոզում և կոչ է անում հրաժարվել մարդը արվեստի հիմնական օբյեկտը դարձնելուց: Ժամանակակից բուրժուական հետադիմական արվեստը բոլորովին հեռացել է ռեալիզմից:

Սեսիայում զեկուցում լսվեց նաև ժամանակակից փիլիսոփայական ռևիզիոնիզմի մասին: Զեկուցող ընկ. Ս. Ղազարյանը բազմաթիվ փաստերի հիման վրա ցույց տվեց, թե ինչպես ռևիզիոնիստները աղավաղում, խեղաթյուրում են մարքս-լենինյան փիլիսոփայության հիմնական դրույթները: Համեմատության միջոցով զեկուցողն ընդգծեց, որ ժամանակակից ռևիզիոնիզմը կրկնում է բուրժուական գաղափարախոսության դրույթները, որ ռևիզիոնիստները փորձում են պրոլետարիատի ուսմունքի մեջ ներմուծել խորթ բուրժուական գաղափարներ և դրանով իսկ ներսից քայքայել, ջլատել բանվորական շարժումը:

Ռեիզիոնիզմի, նրա դրսևորման բոլոր ձևերի դեմ, եզրակացնում է զեկուցողը, պետք է անհաշտ և հետևողական պայքար մղել:

Սեսիայի վերջին զեկուցման թեման էր «Փիլիսոփայական հիմնական հոսանքների պայքարի դրսևորումը Վենետիկի 1958 թ. փիլիսոփայական միջազգային կոնգրեսում»։ Զեկուցումով հանդես եկավ այդ կոնգրեսի մասնակից Գ. Բրուտյանը։ Պատմելով կոնգրեսի աշխատանքների և առաջ քաշված հարցերի մասին, Գ. Բրուտյանը ունկնդիրների ուշադրությունը հրավիրեց կոնգրեսում աչքի ընկած մի փաստի վրա։ Նա ասաց, երբ անհրաժեշտ էր լինում պայքարել մարքսիզմի ուսմունքի որևէ դրույթի դեմ, ապա բուրժուական փիլիսոփայության բոլոր ուղղությունների ներկայացուցիչները անմիջապես միավորվում էին, այնպես որ դժվար էր լինում դանդաղանել, թե բուրժուական որ ուսմունքի գիրքերից են նրանք հանդես գալիս մարքսիզմի դեմ։ Այս հանգամանքը, եզրակացրեց զեկուցողը, մի ավելորդ անգամ ընդգծում է բուրժուական և պրոլետարական գաղափարախոսության միմյանց նկատմամբ անհաշտելի լինելը։

Սեսիայում լսված զեկուցումներում բարձրացված հարցերի շուրջը տեղի ունեցավ մտքերի փոխանակություն, որին մասնակցեցին Աշ. Հովհաննիսյանը, Վ. Զալոյանը և Ռ. Եղիազարյանը։ Ողջունելով սեկտորի նախաձեռնությունը, նրանք ընդգծեցին այն հանգամանքը, որ սեսիայում լսված զեկուցումները շատ ակտուալ էին և ունեին քաղաքական նպատակասլացություն։ Ընկերներ Հովհաննիսյանը և Եղիազարյանը ուրախությամբ նշեցին նաև, որ սեսիան վկայում է Փիլիսոփայության սեկտորի աճը, որն այժմ ունի այնպիսի հասուն ու կարող կադրեր, որոնք ի վիճակի են բարձրացնել ու լուծել շատ ակտուալ հարցեր։

Գ. Գ.